

Հաստատված է
ԵՄԽՀ գիտական խորհրդի

ԵՄԽՀ գիտական խորհրդի նախագահ
Ա. Ս. Աղաբաբյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԱՆՎԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի (այսուհետ՝ ԵՄԽՀ) ռեկտորատի (այսուհետ՝ ռեկտորատ) կարգավիճակը, իրավասությունը, ռեկտորատի նիստերի նախապատրաստման և անցկացման ընթացակարգը:

II. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

3. Ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը ձևավորվում է ռեկտորի հրամանով:

4. Ռեկտորատը, ԵՄԽՀ ռեկտորին կանոնադրությամբ վերապահված իրավասության շրջանակներում, քննարկում է ԵՄԽՀ գործունեությանը վերաբերող հարցեր:

5. Ռեկտորատի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, ռեկտորի կողմից սահմանված ժամկետներում և օրակարգով:

III. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԿԱԶՄԸ

6. Ռեկտորատի կազմի մեջ մտնում են ռեկտորը, պրոռեկտորները, գիտական քարտուղարը, ռեկտորի աշխատակազմի ղեկավարը, արհեստակցական կազմակերպության նախագահը, պրոռեկտորների տեղակալները, վարչությունների պետերը, ֆակուլտետների ղեկանները, համահամալսարանական ամբիոնների վարիչները, գլխավոր հաշվապահը, գրադարանի վարիչը, իրավաբանական բաժնի պետը, կադրերի բաժնի վարիչը, գիտակազմակերպչական բաժնի վարիչը, ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի վարիչը, կրթական գործունեություն իրականացնող կենտրոնների տնօրենները և ուսանողական խորհրդի նախագահը:

7. Ռեկտորի հրավերով ռեկտորատի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով՝ մշտական կամ ժամանակավոր հիմունքներով կարող են մասնակցել համապատասխան կարգավիճակ և որակավորում ունեցող մասնագետներ:

IV. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

8. Ռեկտորատի նիստերը նախագահում է ռեկտորը:

9. Ռեկտորը, բացելով ռեկտորատի նիստը, հայտարարում է նիստի օրակարգը, սահմանում օրակարգի հարցերի քննարկման ընթացակարգը և հաջորդականությունը:

10. Ռեկտորատում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

V. ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

11. Ռեկտորատի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ և կարող են դրվել ռեկտորի կողմից կայացվող որոշումների հիմքում:

VI. ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

12. Ռեկտորատի նիստերն արձանագրվում են: Արձանագրության վարումը կազմակերպում է գիտական քարտուղարը:

13. Ռեկտորատի նիստերի արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ամսաթիվը, նիստին ներկա անձանց անվանացանկը, նիստի օրակարգը, օրակարգի հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները:

14. Ռեկտորատի նիստերի արձանագրությունները ստորագրում են ռեկտորը և գիտական քարտուղարը: